

Ռ. Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ. Հիմ հայերենի ուղիղ խնդիր երկրորդական նախա-
դասարարական կառուցվածք. Երևան, 1972, 195 էջ:

Ինչպես հայտնի է, գրաբարի ձևաբանությունը շատ ավելի ընդարձակ ու բազմակողմանի է ուսումնասիրվել, քան շարահյուսությունը: Վերջին շրջանում, սակայն, աշխուժանում է հետաքրքրությունը նաև հին հայերենի շարահյուսության նկատմամբ և նրա մի շարք հարցեր արդեն քննությանն են նյութ են դարձել:

Երևանի պետական համալսարանի հրատարակչությունը շնորհակալ գործ է կատարել լույս տեսնելով իր գիտական գործունեության ծաղկուն շրջանում մեզինից հեռացած Ռուրեն Կարապետի Հովհաննիսյանի «Հին հայերենի ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունների կառուցվածքը» խորագրով աշխատությունը, որը դալիս է լրացնելու այդ բնագավառում դեռևս գոյություն ունեցող բացը:

Ուսումնասիրության առաջին զիխում շոշափվում են շարահյուսական տեսական հարցեր. քննվում են բարդ նախադասության կառուցվածքային առանձնահատկությունները, տրվում ուղիղ խնդիր երկրորդական նախադասության բնութագրեր: Անդրադառնալով բարդ ստորադասական նախադասությանը՝ հեղինակն իրավացիորեն այն բնութագրում է իբրև շարահյուսական մի միասնական ամբողջություն, հաղորդակցական մի միավոր, որի կազմում եղած զխավոր ու երկրորդական նախադասությունները պայմանականորեն պիտի նախադասություն անվանել: Այդպես է գիտակցվել և հայ ավանդական քերականագիտության մեջ, բարդության բաղադրիչ երկրորդական նախադասությունները համարվել են զխավորի որևէ անդամի ծավալուն արտահայտությունը, դրանով իսկ տարբերակվելով պարզ ինքնուրույն նախադասություններից:

Բարդ նախադասության բաղադրիչ հանդիսացող պարզ նախադասությունները չունենալով հնչերանգային ավարտվածություն, չունեն և հաղորդակցության ինքնուրույն միավորի արժեք: Այստեղից էլ հարց է առաջանում՝ կարելի՞ է արդյոք, դրանք նախադասություն անվանել: Շատ լեզվաբաններ (Վ. Վ. Վինգրադով, Ի. Ա. Ֆեդոտով, Ն. Ս. Պոսպելով և ուրիշներ) գտնում են, որ չի կարելի բարդության կազմում դրանք նախադասություն կոչել, հաղորդակցության ինքնուրույն միավորը տալով զեպրում բարդ նախադասությունն է ամբողջության վերջրած, իրա համար էլ նրանք առաջարկում են բարդության կազմում հանգես եկած նախադասությունները կոչել բաղադրիչներ կամ մասեր: Բերելով այս կարծիքները՝ Հովհաննիսյանը եզրակացնում է. «Երբեք չի կարելի հավասարության նշան դնել բարդ ստորադասական նախադասությունների բաղադրիչների ու պարզ ինքնուրույն նախադասությունների միջև և բարդ ստորադասական նախադասությունը հանգեցնել պարզ նախադասությունների սոսկ մեխանիկական գումարի» (էջ 8): Աշխատության մեջ էլ հեղինակը զխավոր և երկրորդական նախադասություններ անվանումներին զուգահեռ օգտագործում է զխավոր և երկրորդական մասեր անվանումները:

Անդրադառնալով ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունների բնութագրմանը, հեղինակը նշում է, որ այն զխավոր նախադասության ծավալուն անդամն է, թեև ունի ստորգում, լրացնում է զխավոր նախադասության ներգործական սեռի բայով արտահայտված անդամին, ունի բացատրական նշանակություն:

Աշխատության մեջ նշված է ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունների՝ զխավորին կապակցելու երկու եղանակ՝ ստորադասական շղկապներով և հարաբերական դերանուններով:

Իրավացի է հեղինակը՝ ընդգծելով, որ չի կարելի շարահյուսական հարցերը քննելիս առաջնությունը տալ բովանդակությանը կամ կառուցվածքին, և ինքը քննությունը կատարում է բովանդակության և կառուցվածքի միասնության մեջ: Այդ ճիշտ սկզբունքով ուսումնասիրությունը հեղինակին բերել է այն համոզման, որ բարդ ստորադասական նախադասության կապակցության եղանակը կամ ձևը մեծապես կախված է զխավոր նախադասության խնդրառու բայի իմաստից և ներգործական բայերի ներգործող հատկանշի աստիճանից: Ըստ այդմ էլ՝ գրքում ներգործա-

կան բայերը բաժանված են իմաստային երկու խմբի՝ հոգեկան ու մտավոր և ֆիզիկական գործունեություն արտահայտող բայերի։ Հոգեկան ու մտավոր գործունեություն արտահայտող բայերը իրենց հերթին բաժանված են երեք խմբի՝ բայեր, որոնք իբրև ուղիղ խնդիր կարող են ընդունել միայն անորոշ դերբայը, բայեր, որոնց հետ ուղիղ խնդիր կարող են լինել ոչ միայն անորոշ, դերբայը, այլև անվանական խոսքի մասերը, ենթական, հարակատար դերբայները, և բայեր, որոնց միայն անորոշ դերբային էր հին հայերենում առնում հայցական հոլովով ուղիղ խնդիր, իսկ ուղիղ խնդրի իմաստով գործածված անվանական խոսքի մասերը գրվում էին կամ տրական կամ նախդրիվ հոլովներով։ Այդպիսի բայերը զրաբարի քերականները համարում են շեղոք սեռի բայեր։

Հեղինակը համոզիչ կերպով ցույց է տալիս, որ իմաստային այս երկու խմբերին (հոգեկան-մտավոր և ֆիզիկական գործունեություն արտահայտող) համապատասխանում են կապակցության երկու եղանակ՝ շաղկապով և հարաբերական դերանուններով։ Գլխավոր նախադասությանը հարաբերական բառերով ստորադասվող խնդիր երկրորդական նախադասություններին որպես խնդրառու կարող են լինել թե՛ հոգեկան ու մտավոր, և թե՛ ֆիզիկական գործունեություն արտահայտող բայերը, իսկ ստորադասական շաղկապներով կապակցվող ուղիղ խնդիր երկրորդական նախադասություններին խնդրառուի դերում կարող են հանդես գալ միայն հոգեկան ու մտավոր գործունեություն արտահայտող բայերը։

Այնպիսով հաջորդ երկու գլուխներում քննության են առնված ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունների կապակցության այս երկու՝ շաղկապական և հարաբերական, եղանակներն առանձին-առանձին։ Սրանք ներկայացնում են բուն ուսումնասիրությունը, ուր հեղինակը հանդես է բերել քերականական երևույթները քննելու և զրաբարի իմացության խոր գիտելիքներ։

Շաղկապավոր ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունները գրվում բաժանված են չորս ենթատեսակների։ Առաջին խմբի մեջ մտնում են խոսքի և մտածողության խնդիր երկրորդական նախադասություններ, որոնց համար խնդրառու են լինում ասացական կամ մտածական բայերը, կապակցվում են րլ, եթե, զի ստորադասական շաղկապներով։ Մանրամասն շարադրված են սրանց իմաստային տարբերությունները։ Երկրորդ խումբը կազմում են զգայական ընկալման և իմացության օբյեկտ երկրորդական նախադասություններ, որոնց խնդրառու լսեմ, տեսանեմ, լիսեմ և նման բայերն են։ Այս նախադասությունները թե՛ կամ եթե շաղկապներով են կապակցվում։ ա) երբ գլխավոր նախադասության մեջ խնդրառուն լսեմ բայն է. բ) երբ խնդրառու բայը տվյալ գործածությամբ փոխել է իր իմաստը և նշանակում է օբյեկտի ոչ թե՛ ճշգրիտ իմացություն, այլ ենթադրություն, կարծիք, և կամ երկրորդական նախադասությունն արտահայտում է ոչ թե տեղի ունեցած իրական փաստ, այլ կատարվելիք գործողություն։ գ) երբ խնդրառու բայը օգտագործված է ժխտական խոնարհմամբ. դ) երբ խնդրառու բայի հետ ստորագործված է մի՛ արգելականը. ե) երբ խնդրառու բայը հանդես է գալիս որպես պարտ է, ճարկ է, պատշաճ է և այլ միադիմի բայերի ենթակա կամ իբրև մարքեմ բայի խնդիր. զ) երբ գերադաս նախադասությունն սկսվում է իրեւ, յսեմս և նման բառերով և ժամանակային հարաբերության մեջ է մտնում մի այլ նախադասության հետ, երկրորդական նախադասության համար իբրև խնդրառու ծառայող բայն արտահայտված է անցյալ դերբայով, որը ժամանակի պարագա է. է) երբ գերադաս նախադասությունն ինքը մի այլ նախադասության պատճառի ու նպատակի պարագա երկրորդական նախադասություն է. ը) երբ բարդ նախադասության մեջ առկա է պայմանի հարաբերություն։

Շաղկապավոր ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունների երրորդ խումբը կազմում են կամքի ու ցանկության օբյեկտ երկրորդական նախադասություններ, որոնք կամիմ, ցանկամ, ցանամ, լսնդիմ, աղաչիմ, աղեհսմ, քախանեմ, սղոքեմ, ճայցեմ, ճրամայեմ, պատուպեմ, յուղոքեմ, ստիպեմ և այլ խնդրառու բայերի լրացումներն են։

Զորրորդ խմբում անուղղակի հարցում արտահայտող ուղիղ խնդիր երկրորդական նախադասություններն են, որոնցից մի մասում առկա են հարցա-հարաբերական դերանունները, մյուսում՝ ոչ։ Այս կապակցությամբ անդրադառնալով ուրիշի ուղղակի և անուղղակի խոսքերին՝ հեղինակը իրավացիորեն նշում է, որ ուրիշի անուղղակի խոսքը բարդ նախադասության կազմում հանդես է գալիս իբրև բաղադրիչ մաս, ուղիղ խնդիր երկրորդական նախադասություն, իսկ ուղղակի խոսքը ինքնուրույն նախադասություն է՝ իր հնչերանգային ավարտվածությամբ և բաղադրության կազմի մեջ չի մտնում։

Աշխատության վերջին գլուխը նվիրված է հարաբերական դերանուններով կապակցվող ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունների քննությանը: Շարադրված են սրանց և շաղկապավորների միջև եղած տարբերությունները: Այս նախադասություններում իբրև հարաբերյալներ հանդես են գալիս նա. այն. այս. այդ. նայն. սա, ամենայն, ամենեհեմ, ամենեհեմ ցուցական ու որոշյալ դերանունները՝ իրենց ուրույն գործածությամբ:

Որոնք են գրախոսվող աշխատության հիմնական արժանիքները: Ամենից առաջ այն, որ հեղինակը լեզվի հետազոտության ավանդական և նորագույն մեթոդները զուգակցելով՝ հայ բանասիրության մեջ առաջին անգամ ուսումնասիրում և բացահայտում է գրաբարի խնդիր երկրորդական նախադասության կառուցվածքային առանձնահատկությունները և դրանով իր լուծան է մոծում հին հայերենի շարահյուսության ուսումնասիրության քնազավառը: Ու. Հովհաննիսյանը իր դրույթները հաստատում է V դ. գրաբարից բերված հարուստ և համոզիչ օրինակներով, իսկ համեմատության համար հաճախ անդրադառնում է ժամանակակից հայերենին, ինչպես նաև օտար լեզուներին, հանգամանք, որ անշուշտ բարձրացրել է աշխատության գիտական նշանակությունը: Աշխատության արժանիքը պիտի համարել նաև այն, որ թեև գիրքը վերաբերում է գրաբարին, բայց իր արժարժած և լուծած մի շարք խնդիրներով ու տեսական եզրահանգումներով այն կարող է օգտակար լինել նաև ժամանակակից հայերենի նույնատիպ հարցերի կառուցվածքային ուսումնասիրությանը: Վերջին առումով Ու. Հովհաննիսյանի գործը ձեռք է բերում հրատապ նշանակություն և գործնական կարևոր արժեք:

Ս. ԿՅՈՒԼԲՈՒԿԱՂՅԱՆ

Բաճախիական գիտությունների բեկեմածու:

Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Բաճախիական գիտությունների բեկեմածու: